ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2014 **թ.** **N __-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի «Երևան քաղաքի Թումանյան, Նալբանդյան, Ավագ Պետրոսյան փողոցներով և Սայաթ-Նովա պողոտայով պարփակված տարածքի նկատմամբ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 18-ի N 316-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 814-Ն որոշման 3-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը, ինչպես նաև Երևանի քաղաքապետի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝սեփականության իրավունքով «ԱՎԱԳ ՇԻՆ» ՍՊԸ-ին պատկանող Երևանի Կենտրոն Ավագ Պետրոսյան փողոցի հ.21/2 հասցեում գտնվող 0.006742 հա մակերեսով հողամասից (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 05.10.2012թ. հ.05102012-01-0941 վկայական) 0.006215 հա հողամասը, Երևանի Կենտրոն Մետաղագործների փողոցի հ.19 հասցեում գտնվող բնակելի տան 0.01122 հա մակերեսով հողամասից (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 30.10.2012թ. հ. 30102012-01-1426 վկայական) 0.001737 հա հողամասը, Երևանի Կենտրոն Ավագ Պետրոսյան փողոցի հ.15 հասցեում գտնվող բնակելի տան 0.032824 հա մակերեսով հողամասից (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 29.09.2012թ. հ. 29092012-01-1365 վկայական) 0.010153 հա հողամասը, Երևանի Կենտրոն Ավագ Պետրոսյան փողոցի հ.15/1 հասցեում գտնվող բնակելի տան 0.01875 հա մակերեսով հողամասից (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 30.10.2012թ. հ. 30102012-01-1378 վկայական) 0.008025 հա հողամասը, Երևանի Կենտրոն Ավագ Պետրոսյան փողոցի հ.4/9 հասցեում գտնվող բնակելի տան 0.0043 հա մակերեսով հողամասից (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 11.01.2013թ. Հ.11012013-01-1722 վկայական) 0.000626 հա հողամասը, Երևանի Կենտրոն Ավագ Պետրոսյան փողոցի հ.4/8 հասցեում գտնվող 0.00997 հա մակերեսով հողամասից (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 11.01.2013թ. հ.11012013-01-1742 վկայական) 0.000234 հա հողամասը, Երևանի Կենտրոն Մետաղագործների փողոցի հ.21 հասցեում գտնվող շինության 0.00604 հա մակերեսով հողամասը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 10.02.2012թ. Հ.10022012-01-0188 վկայական), Երևանի Կենտրոն Թումանյան փողոցի հ.18ա հասցեում գտնվող 0.014 հա մակերեսով հողամասից (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 19.01.2012թ. հ.19012012-01-0081 վկայական) 0.003038

հա հողամասը, Երևանի Կենտրոն Մետաղագործների փողոցի հ.21 հասցեում գտնվող բնակելի տան 0.011 հա մակերեսով հողամասը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 22.09.2011թ. հ.2804401 վկայական), Երևանի Կենտրոն Ավագ Պետրոսյան փողոցի հ.19/1 հասցեում գտնվող բնակելի տան 0.01149 հա մակերեսով հողամասից (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 21.03.2013թ. հ.21032013-01-2678 վկայական) 0.002453 հա հողամասը, Երևանի Կենտրոն Նալբանդյան փողոցի հ.102/1 հասցեում գտնվող 0.0144 հա մակերեսով հողամասից (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 05.10.2012թ. հ.05102012-01-0983 վկայական) 0.007767 հա հողամասը, Երևանի Կենտրոն Մետաղագործների փողոցի հ.21/2 հասցեում գտնվող 0.00258 հա մակերեսով հողամասից (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 17.01.2013թ. հ.17012013-01-1821 վկայական) 0.001525 հա հողամասը, Երևանի Կենտրոն Նալբանդյան փողոցի հ.106/1 հասցեում գտնվող 0.237116 հա մակերեսով հողամասից (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 09.02.2011թ. հ.2696676 վկայական) 0.027286 հա հողամասը, ընդամենը՝ 0.086101 հա հողամասը Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Երևան քաղաքի Թումանյան, Նալբանդյան, Ավագ Պետրոսյան փողոցներով և Սայաթ-Նովա պողոտայով պարփակված տարածքում գտնվող 0.086101 հա մակերեսով համարժեք հողամասի հետ փոխանակելու համար։

2. Սույն որոշման 1-ին կետում նշված փոխանակվող հողամասերի չափերը փոխանակման պայմանագիրը կնքելու ժամանակ ըստ անհրաժեշտության կարող են ճշգրտվել՝ պահպանելով փոխանակվող հողամասերի համարժեքությունը և (կամ) հավասարությունը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ » ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 31.07.2014թ. «Երևան քաղաքի Թումանյան, Նալբանդյան, Ավագ Պետրոսյան փողոցներով և Սայաթ-Նովայի պողոտայով պարփակված տարածքի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 18-ի N316-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N814-Ն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվել է, որ լիազոր մարմինը՝ տվյալ դեպքում Երևանի քաղաքապետը կարող է սահմանված կարգով Երևան քաղաքի Թումանյան, Նալբանդյան, Ավագ Պետրոսյան փողոցներով և Սայաթ-Նովայի պողոտայով պարփակված տարածքում ձեռք բերողին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը համարժեքորեն փոխանակել տարածքում ձեռք բերողի կողմից կառուցվող շենքի և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասի սահմաններում ընդգրկված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ, իսկ նույն կետի 3-րդ ենթակետով սահմանվել է, որ հողամասերի փոխանակությունից հետո տարածքում ձեռք բերողի սեփականությունը հանդիսացող հողամասերի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու եւ մասնատվածությունը վերացնելու նպատակով այդ հողամասերը կարող են միավորվել եւ փոխանակվել տարածքում ձեռք բերողի կողմից կառուցվող շենքի եւ դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասին կից պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ։

Քննարկվող նախագծով նախատեսվում է սեփականության իրավունքով «ԱՎԱԳ ՇԻՆ» ՍՊԸ-ին պատկանող Կենտրոն վարչական շրջանի տարածքում գտնվող 0.006742 հա, 0.01122 հա, 0.032824 հա, 0.01875 հա, 0.0043 հա, 0.00997 հա, 0.00604 հա, 0.014 հա, 0.011 հա, 0.01149 հա, 0.0144 հա, 0.00258 հա, 0.237116 հա մակերեսներով հողամասերից (ընդհանուրը՝ 0.380432 հա) 0.086101 հա հողամասը փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Երևան քաղաքի Թումանյան, Նալբանդյան, Ավագ Պետրոսյան փողոցներով և Սայաթ-Նովա պողոտայով պարփակված տարածքում գտնվող 0.086101 հա մակերեսով համարժեք հողամասի հետ։

Փոխանակվող հողամասերը ընդգրկված չեն ՀՀ հողային օրենսգրքի օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում և գտնվում են Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 1-ին գոտում։

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը փոխանակվում են համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա։

Ելնելով վերոգրյալից անհրաժեշտություն է առաջացել կայացնելու ավագանու համապատասխան որոշում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագիծը ընդունելու կապակցությամբ Երևանի 2014թ. բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ


«ԱՎԱԳՇԻՆ ՍՊԸ»-ի սեփականության իրավունքով պատկանող հողամաս
Ճանապարհային հողամաս
Հանձնքին եւ վերադարձվող հողամաս